368
Խ-11

ԿՅԱՆՔԻ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐ

□ □ □

368
Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՊԵՏԱՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 1937

Պատ. խմբագիր՝ Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Թարգմանեց Լ. Մ.-ԱՎԱԳՅԱՆ
Տեխ. ձեվ. յեվ սրբ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Ռեկլամ-Հրատ. Բյուրո Սևան-Զանգեզուրի տպարան

Բաղլիտ. № 62015 Պատվեր № 5—234 Տիրաժ 2000

Ca1591 32-K

E 1 MAR 2010

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ԽՍՀՄ Ֆինժողկոմ Գ. ԳՐԻՆԿՈ
3 նոյեմբ. 1936 1000։

ԿՅԱՆՔԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 1. Ապահովագրության մեջ ընդունվում են 16-ից մինչև 60 տարեկան հասակ և առողջական նորմալ վիճակ ունեցող անձինք։

§ 2. Ապահովագրությունը կնքվում է ցանկացած գումարով, բայց մի հողու համար վոչ պակաս, քան 1000 ռուբլուց։ 5000 ռուբլով և ավելի բարձր գումարով ապահովագրությունն ընդունվում է բացառապես բժշկական քննությունից հետո։

§ 3. Ապահովագրությունը ձևակերպվում է ապահովագրվել ցանկացողի գրավոր հայտարարության հիման վրա։

Այն անձնավորությունը, վորը ցանկանում է ապահովագրվել պարտավոր է գրավոր ձևով առաջարկված հարցերի ճիշտ պատասխանները տալ և նշել, թե իր մահվան դեպքում ապահովագրական գումարն ստանալու համար ում է նշանակում.

Բացի հայտարարությունից, Պետապի պահանջի համաձայն, ապահովագրվել ցանկացողը պարտավոր է ներկայացնել իր անցագիրը և փաստաթղթեր։

§ 4. Հայտարարությունը Պետապին ներկայացնելիս ապահովագրական գումարի մեկ տոկոսի չափով կանխավճար է մուծվում։ Ավանսի ընդունումն ապահովագրության կնքումը չի կանխորոշում և Պետապի վրա վորևե պատասխանատվություն չի դնում։

Ապահովագրության համար հայտարարություն ներկայացնողի առողջական վիճակի և բժշկական քննության արդյունքների հիման վրա Պետապն իրավունք ունի ապահովագրությունն կնքելուց հրաժարվել։

§ 5. Ապահովագրությունն ընդունվելու դեպքում մուծված կանխավճարը (§ 4) գնում է ի հաշիվ ապահովագրական առա-

11 SEP 2013

43786

ջին վճարումների, իսկ մերժվելու դեպքում՝ Պետապը կանխավճարն ամբողջապես վերադարձնում է։

Յեթե ապահովագրության համար հայտարարություն ներկայացնողը բժշկական քննությունից խուսափի՝ կանխավճարը չի վերադարձվում։

Ընդունված ապահովագրության դիմաց ապահովագրվողին Պետապն ապահովագրական վկայական է տալիս։

ՊԵՏԱՊԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ

§ 6. Ապահովագրական վկայականում նշված ապահովագրական գումարը Պետապը վճարում է՝

ա) ապահովագրվածի մահվան դեպքում.

բ) դժբախտ դեպքից առաջացած լրիվ ու մշտական հաշմանդամության դեպքում։

գ) ապահովագրական վկայականում նշված ժամկետի լրանալու դեպքում կամ ապահովագրական վկայականում նախատեսված մի այլ դեպք պատահելիս։

Ապահովագրական վարձատրություն չի վճարվում՝

ա) յեթե ապահովագրվելուց հետո, կես տարվա ընթացքում, մահը տեղի ունենա ինքնասպանությունից կամ ինքնասպանության փորձից,

բ) յեթե մահը տեղի ունենա ապահովագրական գումարը ստանալու համար նշանակված անձի (ժառանգի) դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով.

գ) յեթե ապահովագրվածի գույքը դատարանը բռնագրավի կամ յեթե ապահովագրվածի մահից հետո, ապահովագրական գումարն ստանալու համար նշանակված անձի գույքը դատարանը բռնագրավի

§ 7. Յեթե ապահովագրությունը կնքվել և առանց ապահովագրվածի բժշկական քննության, ապահովագրական լրիվ գումարը Պետապը վճարում է ապահովագրության որից մի տարի անցնելուց հետո միայն։ Յեթե տարին չի լրացել, ապահովագրական գումարը Պետապը վճարում է այն դեպքում միայն, յեթե ապահովագրվածի մահը տեղի չի ունեցել դժբախտ դեպքից կամ հետևյալ սուր վարակիչ հիվանդություններից՝ վորովայնի, բծավոր և հետադարձ տիֆերից, պարատիֆից, տիֆոիդից, ծաղկից, կարմրուկից, դիֆտերիտից, դրիպից,

ՀՍՍՀ ԳԱ Գրքի Գրադարան
ГСС Библиотека
ՀԱՍՀ-ԱՄՆ ԳՍՓ
59158-66

27

կրուպոզ թոքատապից, դիզենտերիայից, կարմիր քամուց, սեղտիկ հիվանդությունից, սիբիրախտից, կատաղությունից (водобоязни) ենցեֆալիտից, ստոլբնյակից, մալարիայից, համաճաքակային ցերեբրոսպինալ մենինգիտից, խլախտից, խոլերայից և ժանտախտից։

Յեթե մահը տեղի ունենա ուրիշ պատճառներից, վճարվում է՝

ա) ապահովագրական գումարի կեսը, յեթե մահը տեղի ունենա ապահովագրության յերկրորդ կիսամյակի ընթացքում.

բ) ապահովագրական վճարումների մուծված գումարը, յեթե մահը տեղի ունենա ապահովագրության առաջին կիսամյակը լրանալուց առաջ։

§ 8. Կնքված ապահովագրության համար Պետապի պատասխանատվությունը սկսում է այն որվա 24 ժամից հետո, յերբ Պետապին մուծվել է ապահովագրական վկայականով սահմանված ապահովագրական առաջին վճարը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Դրամը փոստով փոխադրելիս վճարման որը համարվում է դրամը փոստ կամ վարկային հիմնարկ մուծելու որը։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՉԱՓԸ

§ 9. Ապահովագրվածը պարտավոր է ապահովագրական առաջին վճարը մուծել և ապահովագրական վկայականն ստանալ ապահովագրության համար դիմում տալուց հետո մի ամսից վոչ ուշ։ Յեթե այդ ժամկետի ընթացքում վճարը չի մուծված, ապահովագրությունը համարվում է չկնքված և մուծված կանխավճարը (§ 4) Պետապի օգտին է մնում։

§ 10. Ապահովագրությունը նույնպես չկնքված է համարվում դիմում տալու և ապահովագրական առաջին վճարումը կատարելու միջև յեղած ժամանակամիջոցում (Պետապի պատասխանատվության սկիզբը) ապահովագրվածը մահանում կամ յենթարկվում է ծանր հիվանդության կամ հաշմանդամության։

§ 11. Մուծման յենթակա ապահովագրական վճարումների չափը սահմանվում է Պետապի Գլխավոր Վարչության գրույքներով (տարիֆներով)։

§ 12. Ապահովագրական վճարումները կատարվում են ապահովագրական վկայականում նշված ժամկետներում՝ ապահո-

վագրվածի ցանկության համաձայն տարեկան մի անգամ ըստ յեռամսյակների, բայց համապատասխան ժամանակաշրջանի համար միշտ առաջուց։

Պետապը պարտավոր չէ հիշեցնել ապահովագրվածին վճարումների մուծման ժամկետը լրանալու մասին։

§ 13. Ապահովագրական վճարումները կատարվում են Պետապի անդորրագրի դիմաց կամ փոխանցվում են Պետապի հաշվին վարկային հիմնարկի միջոցով։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՇԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

§ 14. Սահմանված ժամկետում վճարումը չկատարելու դեպքում ապահովագրվածին իրավունք է տրվում մուծում կատարել յերկու արտոնյալ ամսվա ընթացքում, պահպանելով ապահովագրական նախկին պայմանները։

Յեթե հիշված ժամկետի ընթացքում վճարումները չեն կատարվում—ապահովագրությունը, վորի համար ապահովագրական վճարումները մուծվել են վոչ պակաս, քան մի տարվա համար, ուժի մեջ է մտնում նաև ուշացումից հետո, սակայն ապահովագրական գումարի չափը նվազում է § 15 և § 16-ի համապատասխան։

Այն ապահովագրության համար, վորի վճարումներն մուծված են մի տարուց պակաս ժամկետի համար, սահմանված յերկու արտոնյալ ամիսն անցնելուց հետո, Պետապի պատասխանատվությունը դադարում է և ապահովագրվածը կամ ապահովագրական գումարն ստանալու համար նշված անձնավորությունը, Պետապից վորևե գումար ստանալու իրավունքից զրկվում է։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՆՎԱԶՈՒՄԸ

§ 15. Յեթե ապահովագրության սկզբից մի տարի անցնելուց հետո ապահովագրական վճարումները դադարեն, ապահովագրական գումարի չափը նվազում ու սահմանվում է հետևյալ աղյուսակով, վորը հաշված է սկզբնական ապահովագրության յուրաքանչյուր 1000 ռուբլու համար՝

Յեթե ապահովագրական վճարումներն մուծված են՝	Յեթե ապահովագրության ժամկետն է			
	5 տարի	10 տարի	15 տարի	20 տարի
	ռուբ.	ռուբ.	ռուբ.	ռուբ.
1 տարվա համար . .	207	105	67	48
2 ,, ,, . .	422	220	142	105
3 ,, ,, . .	623	327	214	158
4 ,, ,, . .	816	433	285	210
5 ,, ,, . .	—	537	357	262
6 ,, ,, . .	—	638	429	313
7 ,, ,, . .	—	735	499	363
8 ,, ,, . .	—	828	569	413
9 ,, ,, . .	—	916	638	464
10 ,, ,, . .	—	—	706	516
11 ,, ,, . .	—	—	772	569
12 ,, ,, . .	—	—	335	623
13 ,, ,, . .	—	—	894	677
14 ,, ,, . .	—	—	950	730
15 ,, ,, . .	—	—	—	783
16 ,, ,, . .	—	—	—	834
17 ,, ,, . .	—	—	—	882
18 ,, ,, . .	—	—	—	926
19 ,, ,, . .	—	—	—	966

16. Յեթե ապահովագրումը նվազում է ապահովագրվածի դիմումի հետևանքով, Պետապի պատասխանատվությունը նվազում և ապահովագրական գումարի համար սկսվում է այն որվա 24 ժամից հետո, յերբ վերջացել է վերջին վճարումի ժամկետը, իսկ յեթե նվազում է վճարումն իր ժամկետին չկատարելու հետևանքով՝ այն որվա 24 ժամից հետո, յերբ վերջացել է արտոնյալ ժամկետը։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 17. Դադարած (§ 14) կամ նվազած ապահովագրությունը Պետապի համաձայնությամբ կարող է վերականգնել։ Ապահովագրությունը վերականգնելու համար, Պետապի համաձայնու-

թյունը ստանալուց հետո, ապահովագրվածը պարտավոր է մի ամսվա ընթացքում մուծել բոլոր անցկացրած ժամկետների համար հասանելիք վճարումները։ Վերականգնած ապահովագրության համար Պետապի պատասխանատվությունն սկսվում է այն որվա 24 ժամից հետո, յերբ կատարվել են բոլոր ժամկետն անցած վճարումները։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ ՄԻՆՉԵՎ ՆՐԱ ԺԱՄԿԵՏԻ ԼՐԱՆԱԼԸ

§ 18. Այն ապահովագրության համար, որի վճարումները կատարվել են վոչ պակաս, քան մի տարվա համար, ապահովագրության վաղակետ դադարեցման դեպքում ապահովագրվածն իրավունք ունի իր կատարած ապահովագրական վճարումների մի մասը Պետապից հետ ստանալու։

Ապահովագրվածին վերադարձի յենթակա ապահովագրական վճարումների չափը որոշվում է հետևյալ աղյուսակով, որ հաշված է ապահովագրության գումարի յուրաքանչյուր 1000 ռուբլու համար՝

Ապահովագրական վճարումները կատարելուց հետո յեթե ապահովագրությունը շարունակվելու յե՝	Յեթե ապահովագրության ժամկետն է			
	5 տարի	10 տարի	15 տարի	20 տարի
	ռուբ.	ռուբ.	ռուբ.	ռուբ.
1 տարի . . .	175	76	44	28
2 ,, . . .	371	163	95	62
3 ,, . . .	570	250	146	95
4 ,, . . .	780	342	199	130
5 ,, . . .	—	439	256	167
6 ,, . . .	—	540	315	205
7 ,, . . .	—	647	377	246
8 ,, . . .	—	759	442	288
9 ,, . . .	—	876	511	333
10 ,, . . .	—	—	582	380
11 ,, . . .	—	—	658	429
12 ,, . . .	—	—	737	481
13 ,, . . .	—	—	820	535
14 ,, . . .	—	—	908	592
15 ,, . . .	—	—	—	652
16 ,, . . .	—	—	—	715
17 ,, . . .	—	—	—	781
18 ,, . . .	—	—	—	850
19 ,, . . .	—	—	—	923

Հասանելիք գումարից Պետապը պահում է չմարած փոխատվությունը, յեթե այդպիսին տրված է յեղել, հասանելիք տոկոսներով (§ 21—23)։

§ 19. Ապահովագրության վաղակետ լուծարքի մասին ապահովագրվածը Պետապին ներկայացնում է գրավոր դիմում ապահովագրական վկայականի հետ միասին։

Հասանելիք գումարը ապահովագրվածին վճարվում է ապահովագրության վաղակետ լուծարքի մասին Պետապը դիմում ստանալուց հետո վոչ ուշ, քան մի ամսից։

§ 20. Յեթե ապահովագրվածը պահանջ է դրել ապահովագրության վաղակետ լուծարքի մասին, այդպիսի ապահովագրության համար ապահովագրական լրիվ գումարով Պետապը

պատասխանատվություն է կրում մինչև հասանելիք գումարի վճարման պահը, սակայն ոչ ավելի յերկար, քան ապահովագրական վճարումների մուծման համար սահմանված յերկամյա արտոնյալ ժամկետի լրացումը (§ 14)։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԴԻՄԱՑ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 21. Այն ապահովագրությունների դիմաց, որոնց վճարումները կատարված է ոչ պակաս, քան յերեք լրիվ տարվա համար, ապահովագրվածը կարող է փոխատվություն ստանալ, յեթե ապահովագրությունն ուժի մեջ է։

§ 22. Փոխատվությունը տրվում է ապահովագրվածի գրավոր դիմումի համաձայն, համապատասխան պարտաթղթի դիմաց։ Դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացնել ապահովագրական վկայականը, որի վրա Պետապը համապատասխան նշում (надпись) անելուց հետո, վերադարձնում է ապահովագրվածին։

§ 23. Սահմանված ժամկետում փոխատվությունը չմարելու դեպքում Պետապի պատասխանատվությունն ըստ նվազած ապահովագրության ամբողջապես դադարում է, յեթե փոխատվությունը վերացված է յեղել ապահովագրության վաղակետ լուծարքի դեպքում ապահովագրվածին հասանելիք գումարի չափով (§ 15)։ Իսկ յեթե հիշված գումարից պակաս է վերացված յեղել, այդ դեպքում ապահովագրական գումարը պակասեցվում է ապահովագրվածի չմարած փոխատվության համապատասխան, տոկոսներով միասին հաշված։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՆՔԵԼԻՍ ՎՈՉ ՃԻՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

§ 24. Յեթե հայտաբերվի, որ Պետապին տված դիմումի կամ այլ փաստաթղթերի մեջ, որոնց հիման վրա ապահովագրությունը կնքվել կամ վերանորոգվել է, ապահովագրվածը հարցերին ոչ ճիշտ պատասխաններ է տվել, ապահովագրության պայմանագրի ժամկետի առաջին յերկու տարվա ընթացքում Պետապն իրավունք ունի՝ ապահովագրվածի կենդանության ժամանակ ապահովագրությունը դադարեցնել առանց վերադարձնելու ապահովագրական վճարումները, իսկ ապահովագրվածի մահից հետո—մերժել ապահովագրական վկայականի դիմաց վորևե գումար վճարելու։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼԸ ՅԵՎ ՄԻ ԱՅԼ ԱՆՁՈՎ ՆՐԱՆ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 25. Ապահովագրական գումարն ստանալու համար ապահովագրվածը կարող է իր ընտրությամբ ֆիզիկական կամ իրավաբանական մեկ կամ մի քանի անձինք, ինչպես նաև ապահովագրական վկայականի ներկայացնողին կամ որինական ժառանգներ նշանակել։

§ 26. Ապահովագրության ժամկետի տևողության ընթացքում ապահովագրվածն իրավունք ունի ապահովագրական գումարն ստանալու համար իր նշանակված անձը մի այլ անձով փոխարինել։ Նշված անձի փոխարինման մասին ապահովագրվածը պարտավոր է Պետապին գրավոր դիմումով հայտնել և ներկայացնել ապահովագրական վկայականը համապատասխան նշում (надпись) անելու համար։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿՈՐՍՏԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՐԿՆԱԿԻ (ԴՈՒԲԼԻԿԱՏԻ) ԴՈՒՐՍ ԳՐԵԼԸ

§ 27. Ապահովագրական վկայականի կորստի դեպքում ապահովագրվածը, իսկ նրա մահվան դեպքում ապահովագրական գումարն ստանալու համար նշանակված անձը, այդ մասին պիտի հայտնի Պետապին և ապահովագրական վկայականի կորստի մասին պաշտոնական հայտարարություն (публикация) տա։ Յեթե հայտարարության տալու որից հաշված յերկու ամսվա ընթացքում սկզբնական ապահովագրական վկայականը Պետապին չներկայացվի, վկայականը վոչնչացված է համարվում և Պետապը տալիս է նրա կրկնակը (дубликат)։

§ 28. Ներկայացնողի (на предявителя) վրա կնքված ապահովագրական վկայականի կորստի մասին ապահովագրվածի մահից հետո դիմումներ չեն ընդունվում։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 29. Ապահովագրվածի մահվան դեպքում ապահովագրական գումարն ստանալու համար Պետապին պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) տվյալ ապահովագրության ապահովագրական վկայականը և ապահովագրական անդորրագիրը վերջին վճարումի մուծման մասին.

բ) Զագս-ի վկայականը՝ ապահովագրվածի մահվան մասին, ցույց տալով մահվան պատճառը.

գ) ապահովագրվածին վերջին հիվանդության ընթացքում սպասարկող բժշկի վկայականը, որի մեջ նշված պիտի լինի հիվանդության ընթացքը և յեթե դիահերձում է կատարվել՝ հերձող բժշկի վկայականը։ Բժիշկների ստորագրությունները պաշտոնապես վավերացված պիտի լինի.

դ) ապահովագրական վարձատրություն ստացողի անցագիրը։

Յեթե մահը դժբախտ դեպքի հետևանք և յեղել կամ տեղի յե ունեցել բռնի կերպով, բացի նշված փաստաթղթերից, պահանջվում է դժբախտ դեպքի ակտը, ինչպես նաև դատավճռի պատճենը, յեթե դատական գործ է յեղել։

§ 30. Յեթե ապահովագրվածը կենդանի մնա մինչև ապահովագրական վկայականի մեջ պայմանավորված ժամկետը, նա պարտավոր է ապահովագրական վկայականը և ապահովագրական վերջին վճարումի մուծման անդորրագիրը Պետապին ներկայացնել։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 31. Ապահովագրական գումարը Պետապը վճարում է 29 և 30 §§-ում նշված բոլոր փաստաթղթերը ստանալու օրից հաշված մի ամսից վոչ ուշ։

§ 32. Յեթե ապահովագրական գումարն ստանալու համար նշանակված անձի իրավունքը մեկն ու մեկը վիճարկի և ի հաստատություն այդ վեճի դատական կամ քննչական մարմիններից ստացած տեղեկանք ներկայացնի Պետապին, ապահովագրական գումարը վճարվում է վեճը լուծվելուց հետո միայն։

§ 33. Ապահովագրական գումարը վճարելիս Պետապը պահում է այն ապահովագրական վճարումները, որոնք ստացված չեն, յեղել մինչև ապահովագրական տարվա վերջը, որում ապահովագրվածը մահացել է։

§ 34. Ապահովագրական գումարը Պետապը վճարում է այդ գումարն ստացողի բնակավայրում կամ փոխադրում և ստացողին նրա նշած հասցեյով։

§ 35. Ապահովագրական գումարն ստանալու պահանջը Պետապին պիտի տրվի ապահովագրվածի մահից հետո վոչ ուշ, քան յերկու տարուց։

Այդ ժամկետից հետո տրված պահանջները չեն բավարարվում։

ՊԵՏԱՊԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

§ 36. Կյանքի ապահովագրության պայմանագրի համաձայն Պետապն ապահովագրական գումար է վճարում յերբ դժբախտ դեպքի հետևանքով ապահովագրվածը մշտական—ամբողջական (կատարյալ) կամ մասնակի հաշմանդամության է յենթարկվում։ Ապահովագրական վճարումները չմուծելու հետևանքով ապահովագրական գումարի նվազելու դեպքում ապահովագրվածի հաշմանդամության համար Պետապի պատասխանատվությունը դադարում է։

§ 37. Դժբախտ դեպք չեն համարվում և Պետապը պատասխանատվություն չի կրում, յեթե մշտական հաշմանդամությունն առաջանա ինքնասպանության փորձի հետևանքով, թեկուզ այդ լինի անմեղսագիտակ վիճակում կամ ապահովագրվածի վոճրագործության կամ վոճրագործության փորձ անելիս, ինչպես նաև զանազան հիվանդություններից և նրանց հետևանքներից թեկուզ և այդ առաջացած լինի ապահովագրվածի իր պաշտոնական պարտականությունները կատարելիս։

§ 38. Դժբախտ դեպքի հետևանքից առաջացած ապահովագրվածի հաշմանդամության աստիճանը Պետապի հրահանգի հիման վրա, բուժումը վերջանալուց հետո վորոշում են փորձագետ—բժիշկը կամ Բժշկական Փորձագիտության բյուրոն։

§ 39. Ապահովագրվածի աշխատունակության լրիվ (100%)

կորստի դեպքում Պետապը վճարում է ապահովագրական լրիվ գումարը և ապահովագրությունը դադարում է։

§ 40. Ապահովագրվածի աշխատունակության մասնակի կորստի դեպքում Պետապն ապահովագրվողին ապահովագրական հետագա վճարումներից ազատում է և ինքը վճարում է՝

ա) ապահովագրական գումարի 60 %-ը, յեթե ապահովագրվածը աշխատունակությունը կորցրել է 80%-ից վոչ պակաս. ապահովագրական գումարի մնացած 40%-ը վճարվում է ապահովագրվածի մահից հետո կամ յերբ նա կենդանի մնա մինչև ապահովագրության վերջը։

գ) ապահովագրական գումարի 40%-ը,—յերբ ապահովագրվածը կորցրել է իր աշխատունակությունը 50-ից մինչև 80%, ապահովագրական գումարի մնացած 60%-ը վճարվում է ապահովագրվածի մահից հետո կամ յերբ նա կենդանի մնա մինչև ապահովագրության վերջը։

գ) ապահովագրական գումարի 20%-ը—յեթե ապահովագրվածը աշխատունակությունը կորցրել է 30-ից մինչև 50%, ապահովագրական գումարի մնացած 80%-ը վճարվում է ապահովագրվածի մահից հետո կամ յերբ նա կենդանի մնա մինչև ապահովագրության վերջը։

§ 41. Յեթե ապահովագրվածն իր աշխատունակությունը կորցնի 20-ից մինչև 30%-ը, նա ազատվում է ապահովագրական վճարումների հետագա մուծումներից մշտական հաշմանդամությունը հաստատվելուց հետո, իսկ ապահովագրական գումարը վճարվում է ապահովագրվածի մահից հետո կամ յերբ նա կենդանի մնա մինչև ապահովագրության վերջը։

§ 42. Այն դժբախտ դեպքերի համար, վորոնց հետևանքով ապահովագրվածը իր աշխատունակությունը կորցրել է 20%-ից պակաս, Պետապը հաշմանդամության համար պատասխանատվություն չի կրում։

§ 43. Ստացված ապահովագրական վճարումներն ապահովագրական այն տարվա համար, վորում տեղի յե ունեցել ապահովագրվածի հաշմանդամությունը, Պետապը պահում է ապահովագրական գումարը կամ նրա մասը վճարելիս։

§ 44. Այն դեպքերում, յերբ հաշմանդամությունը վորոշելու համար ապահովագրական վճարումները մուծելու համար սահմանված արտոնյալ ժամկետն անցնելուց հետո (§ 14) ապահովագրվածի վերաքննություն է պահանջվում, ապահովագրվածը պայ-

մանական կերպով ազատվում է ժամկետային վճարումներից մինչև վերաքննությունը, ընդ վորում մինչև վերաքննությունը Պետապը շարունակում է ապահովագրության համար պատասխանատվություն կրել։ Յեթե վերաքննությունից հետո հաշմանդամությունը վորոշվի 20%-ից պակաս կամ աշխատունակությունը վերականգնի լրիվին, ապահովագրվողը պարտավոր է նրանից չստացված ապահովագրական վճարումները կատարել 6 ամսից վոչ յերկար ժամկետում հաշված այն որից, յերբ նրան հայտնված է յեղել ապահովագրական վճարումները շարունակելու անհրաժեշտության մասին, իսկ յեթե ապահովագրվածը հիշված վճարումները չկատարի նշված 6 ամսվա ընթացքում, ապահովագրությունը վերջանում է սույն կանոնների § 14-ի համաձայն։

§ 45. Պետապը պատասխանատվություն է կրում ապահովագրվածի այն աշխատունակության կորստի համար, վորը նա ունեցել է դժբախտ դեպքից անմիջապես առաջ։ Արհեստակցական աշխատունակության կորստի համար Պետապը պատասխանատվություն չի կրում։

§ 46. Ապահովագրությունն ուժի մեջ գտնված ամբողջ ժամանակամիջոցում Պետապը պատասխանատվություն է կրում նաև այնպիսի հաշմանդամության համար, վորն առաջացել է նախընթաց դեպքի լուծարքից հետո պատահած դժբախտ դեպքից, ընդ վորում հետագայի դժբախտ դեպքերի վերաբերմամբ աշխատունակության կորստի աստիճանը վորոշվում է ապահովագրության սկզբից ստացած վնասվածքների հետ միասին, իսկ հետագայի դժբախտ դեպքի համար վճարման յենթակա գումարից պահվում է նախընթաց դժբախտ դեպքի առթիվ վճարված վարձատրության գումարը, յեթե այդպիսին վճարված է յեղել։

§ 47. Դժբախտ դեպքի մասին ապահովագրվածը կամ ապահովագրական գումարն ստանալու համար նշանակված անձը պարտավոր է 10 որվա ընթացքում (դեպքի որից հաշված) Պետապին հայտնել և ներկայացնել սպասարկող բժշկի վկայականը, ինչպես նաև դժբախտ դեպքի առթիվ կազմված ակտի կամ արձանագրության պատճեն կամ նրան փոխարինող փաստաթուղթ, վորով ապացուցվի, վոր ապահովագրվածն իրոք յենթարկվել է դժբախտ դեպքի։

ԽՍՀՄ ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՌԱԲԻՆՈՎԻՉ

ՊԵՏ ՊԱՏՄ ՀՐԱՏԱՐԱԿ ՀՍՀ Գրադարան ГСС Библиотека

139
1/2
43786

ПРАВИЛА

добровольного индивидуального страхования жизни.

ՀՀ Ազգային գրադարան
NL0215951